Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 57 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ՄԱՅՐԱՏՈՒՆ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է ցուցաբերել սոցիալական և հոգեբանական աջակցություն հասարակության հետևյալ խմբերին, ինչպես նաև նպաստել նրանց մասնագիտական հմտությունների ձեռքբերմանը: 1.1. Բոլոր տեսակի բռնության ենթարկված անօթևան կանայք, ովքեր ունեն մինչև 10 (տասը) տարեկան երեխա (երեխաներ): 1.2. Հղիներ, ովքեր չունեն ապաստան և պաշտպանության կարիք ունեն:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով նախատեսվում է օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքացիներ Կալիֆորնիա նահանգի Սիլ Բիչ քաղաքի բնակիչներ, ամերիկահայ բարեգործներ՝ տեր և տիկին Ղազարյանները և նրանց ընտանիքը՝ 3.1. Սեդա-Յունիս Ղազարեան Յունիսի (անձնագիր՝ N AU0448316, տրված՝ 30.09.2021 թ., 001-ի կողմից). 3.2. Զուիրաբ-Բարսեղ Ղազարյան Բարսեղի (անձնագիր՝ N AU0448317, տրված՝ 30.09.2021 թ., 001-ի կողմից):
4.	Ծրագիրը կատարողը	«Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամ, գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, գյուղ Պտղունք, Վարդանանց 1, հեռ.՝ 043500503, թեժ գիծ՝20-80, հարկ վճարողի հաշվառման համար 01557357
5.	Ծրագրի իրականացման վայրը	Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, գյուղ Պտղունք, Վարդանանց 1 Բնագավառը՝ սոցիալական

6.	Ծրագրի բյուջեն	$239700 (երկու հարյուր երեսունինը հազար յոթ հարյուր) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	Հայաստանի Հանրապետությունում բնակվող՝ 7.1. բոլոր տեսակի բռնության ենթարկված և անօթևան դարձած կանայք, ովքեր ունեն մինչև 10 (տասը) տարեկան երեխա (երեխաներ). 7.2. հղիներ, ովքեր չունեն ապաստան և պաշտպանության կարիք ունեն:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	«Մայրատուն» ծրագրի շրջանակներում շահառուները կարող են ապաստան գտնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունք գյուղի Վարդանանց 1 հասցեում գտնվող հիմնադրամի շենքում: Ապաստանում կարող են բնակություն հաստատել բռնության ենթարկված և անօթևան հղիներ ու կանայք, ովքեր ունեն մինչև 10 (տասը) տարեկան երեխա (երեխաներ): Մայրատանը նրանք ստանում են՝ 9.1. մոր և երեխայի համար նախատեսված սենյակ (անվճար). 9.2. 4-անգամյա սնունդ, $22000 (քսաներկու հազար) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ. 9.3. բեռով բեռնված կոնտեյների ներմուծում օտարերկրյա պետությունից՝ $170000 (հարյուր յոթանասուն հազար) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ, որը ներառում է 9.3.1. հագուստ, կոշիկ, հիգիենայի և կենացաղային պարագաներ և այն ամենը, ինչ անհրաժեշտ է մորն ու մանկանը $160000 (հարյուր վաթսուն հազար) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ արժողությամբ. 9.3.2. 10000 (տասը հազար) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամը իրենից նրկայացնում է բեռով բեռնված կոնտեյների բեռնափոխադրման ծախսը: Ծրագիրն ունի նաև դաստիարակչական նպատակ, որի իրականացման համար ծառայում են հիմնադրամի համակարգչային սենյակը, խաղասենյակը, կարի սենյակը, ֆիլմերի ցուցադրման համար նախատեսված սենյակը, մարզասրահը, մատնահարդարի և վարսահարդարի սենյակները (նշված ծառայություններն անվճար են):

		9.4. 2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը կազմակերպչական ծախսերը կազմում են՝ $47700 (քառասունյոթ հազար յոթ հարյուր) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ, որից՝ 9.4.1. կոմունալ ծախսեր (գազ, էլեկտրաէներգիա, ջուր)՝ $11000 (տասնմեկ հազար) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ. 9.4.2. հեռախոսային և ինտերնետային ծառայություններ՝ $1200 (հազար երկու հարյուր) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ. 9.4.3. հոգեբանի անվճար ծառայություն (հոգեբանի աշխատավարձը հոգում է հիմնադրամը) $11500 (տասնմեկ հազար հինգ հարյուր) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ՝ ներառյալ հարկերը. 9.4.4. գրասենյակային, տնտեսական ծախսեր և գույքի ձեռքբերում՝ $11700 (տասնմեկ հազար յոթ հարյուր) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ. 9.4.5. մեքենայի շահագործման և տրանսպորտային ծախսեր՝ $5300 (հինգ հազար երեք հարյուր) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ. 9.4.6. ապաստանի շահառուների համար թարմ հաց և խմորեղեն թխելու նպատակով լավաշի փռի սարքավորումների ձեռքբերում և տեղադրում՝ $7000 (յոթ հազար) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ: Նշված միջոցառումներն իրականացվելու են 2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ծրագիրն իրականացնելու համար նախատեսվում է՝ 10.1. սննդի ձեռքբերում՝ Հայաստանի Հանրապետության տարածքում՝ $22000 (քսաներկու հազար) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ. 10.2. բեռով բեռնված կոնտեյների ներմուծում օտարերկրյա պետությունից՝ $170000 (հարյուր յոթանասուն հազար) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ, որը ներառում է՝

		10.2.1. հագուստ, կոշիկ, հիգիենայի և կենացաղային պարագաներ և այն ամենը, ինչ անհրաժեշտ է մորն ու մանկանը՝ $160000 (հարյուր վաթսուն հազար) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ արժողությամբ 10.2.2. 10000 (տասը հազար) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամը իրենից նրկայացնում է բեռով բեռնված կոնտեյների բեռնափոխադրման ծախսը. 10.3. կոմունալ ծառայությունների ձեռքբերում (գազ, էլեկտրաէներգիա, ջուր)՝ $11000 (տասնմեկ հազար) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ. 10.4. հեռախոսային և ինտերնետային ծառայությունների ձեռքբերում՝ $1200 (հազար երկու հարյուր) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ. 10.5. գրասենյակային ծախսեր և գույքի ձեռքբերում՝ $11700 (տասնմեկ հազար յոթ հարյուր) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ. 10.6. մեքենայի շահագործման և տրանսպորտային ծախսեր $5300 (հինգ հազար երեք հարյուր) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ. 10.7. ապաստանի շահառուների համար թարմ հաց և խմորեղեն թխելու նպատակով լավաշի փռի սարքավորումների ձեռքբերում և տեղադրում $7000 (յոթ հազար) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ:
11.	Կազմակերպչական ծախսեր	2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը կազմակերպչական ծախսերը կազմում են են $47700 (քառասունյոթ հազար յոթ հարյուր) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ՝ 11.1. կոմունալ ծախսեր (գազ, էլեկտրաէներգիա, ջուր)՝ $11000 (տասնմեկ հազար) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ. 11.2. հեռախոսային և ինտերնետային ծառայություններ՝ $1200 (հազար երկու հարյուր) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ. 11.3. հոգեբանի անվճար ծառայություն (հոգեբանի աշխատավարձը հոգում է հիմնադրամը)՝ $11500 (տասնմեկ հազար հինգ հարյուր) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ. 11.4. գրասենյակային ծախսեր և գույքի ձեռքբերում՝ $11700 (տասնմեկ հազար յոթ հարյուր) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ.

		11. 5. մեքենայի շահագործման և տրանսպորտային ծախսեր՝ $5300 (հինգ հազար երեք հարյուր) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ. 11.6. ապաստանի շահառուների համար թարմ հաց և խմորեղեն թխելու նպատակով լավաշի փռի սարքավորումների ձեռքբերում և տեղադրում $7000 (յոթ հազար) Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարին համարժեք դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	12.1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն. 12.2. Հայաստանի Հանրապետության ոստիկանություն. 12.3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն. 12.4. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն. 12.5. տեղական հասարակական, բարեգործական կազմակերպություններ, հիմնադրամներ, համայնքներ և թաղապետարաններ, մարզպետարաններ. 12.6. Հասարակական կազմակերպություններ, որոնք առնչվում են ընտանեկան բռնության և ընտանեկան համակարգի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	13.1. Ծրագրի իրականացման վերաբերյալ տեղեկության ներկայացում հիմնադիր-գործադիր տնօրենին և հոգաբարձուների խորհրդին 13.2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով տեղեկությունների ներկայացում լիազոր մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

19.01.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ